

ԼԱԼԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ*

*Քանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Խ. Արովյանի անվ. ՀՊՄՀ Լեզվաբանական
հեղափոխությունների լաբորատորիա
lingualal51@mail.ru*

ԿԱԽՅԱԼ ԱՐՄԱՏՆԵՐԻ ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ ԳՐԱԲԱՐԻ ԲԱՅԱԿԱՆ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (ԸՍՏ ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ)

Քանայի բառեր¹ կախյալ արմատ, կրկնավոր բարդություններ, սերող հիմք, համադրական բարդություններ, կառուցատիպ, արմատական տիպ, հնչյունափոխական տիպ:

Ներածություն

Արմատագիտության տեսության մեջ առանձնացնում են անկախ և կախյալ արմատներ հասկացությունները: Անկախ արմատներն ունեն արմատական (բառական, ստուգաբանական) իմաստ, թեքականության հատկանիշ, գործածության ինքնուրույնություն և կարող են համընկնել կամ չհամընկնել բառի ձևային պլանին:

Կախյալ արմատները զուրկ են ինքնուրույնությունից, անկախ գործածություն չունեն և ինքնուրույնաբար հազվադեպ են հանդիպում¹:

Կախյալ արմատները կարող են իրացվել բառակազմական մակարդակում՝ հանդես գալով որպես միջուկային միավորներ (անդամներ), որոնց բառական իմաստն ամբողջացնում են առմիջուկային արմատները (բառակազմական կամ բառահարաբերական ձևություններ):

Կախյալ արմատներով կազմված բառերի մեջ որոշակի հետաքրքրություն են ներկայացնում համադրական այն բարդությունները, որոնց սերող հիմքերը կազմված են կախյալ արմատների կրկնությամբ: Արմատակրկնությամբ կազմված համադրական բարդությունների ուսումնասիրությունն ունի

^{*} Հոդվածը ներկայացվել է 02.10.19, գրախոսվել է 01.07.20, ընդունվել է տպագրության 14.08.20:

¹ Զահուկյան 1989, 32:

Կախյալ արմատների բառակազմական արժեքը...

գիտատեսական որոշակի արժեք. այն կարող է ամբողջացնել պատմական բառագիտության նկարագրությունը համաժամանակյա կտրվածքով:

Ինչպես նշվում է մասնագիտական գրականության մեջ, արմատական բուն բայերը ... քարացած՝ բայերից և նրանց ածանցյալներից դուրս գործածություն չունեցող ձևեր են, որոնց ստուգաբանական վերլուծության դեպքում էլ հաճախ նույնպես հայտնաբերվում է անհնքնուրույնություն²:

Այս առումով մենք կարևորում ենք հին հայերենի համադրական (կրկնավոր) բարդությունների, մասնավորապես կախյալ արմատներով կրկնավոր բարդությունների ուսումնասիրությունը, որ կարող է որոշակի գաղափար տալ V դարի կրկնավոր բարդությունների բառակազմական տիպերի, դրանց խոսքիմաստային արժեքների, կախյալ արմատների ծագումնաբանության, դրանց իմաստների և այլ հարցերի վերաբերյալ:

Այս կարգի հարցերի լուծման արդյունավետ ուղին կրկնավոր բարդությունների ուսումնասիրությունն է հին հայերենի թարգմանական առաջին գործում՝ Աստվածաշունչ մատյանում³:

Այս առումով գրաբարի կրկնավոր բարդություններին անդրադարձել են Հր. Աճառյանը (Հայերեն արմատների ստուգաբանություն)⁴, Է. Թումանյանը (Գրաբարի համաժամանակյա քննություն)⁵, Վ. Առաքելյանը (Հինգերորդ դարի թարգմանական գրականության լեզուն և ոճը)⁶, Լ. Խաչատրյանը (Աստվածաշնչի արմատակրկնության կառուցատիպեր)⁷ և այլն:

Կախյալ արմատներով բայական կրկնավորների իմաստակառուցվածքային յուրահատկություններն Աստվածաշունչ մատյանում

Մեր կատարած ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Աստվածաշնչում գործածված կրկնավոր բարդությունները՝ ձևավորված կախյալ արմատներով, կարելի է բաժանել չորս խմբի (ըստ խոսքիմաստային արժեքների):

Առաջին խումբն արտահայտում է առարկա կամ առարկայացված հասկացություն (գոյական անուն), երկրորդ խումբը՝ առարկաների հատկանիշ

² Զահուկյան 1989, 48:

³ Քննության բնագիր ենք ընտրել Հայաստանի աստվածաշնչային ընկերության՝ 1997-ի հրատարակած բնագիրը՝ «Աստուածաշունչ մատեան Հին և Նոր կտակարանաց»:

⁴ Աճառյան 1971–1979:

⁵ Туманян 1971, 167–170.

⁶ Առաքելյան 1984:

⁷ Խաչատրյան 2018, N 21, 64–75: Խաչատրյան 2018, N 4, 194–205: Խաչատրյան 2019, N 1, 52–62:

Խաչատրյան Լ.

(ածական անուն), երրորդ խումբը՝ գործողության կամ ընթացայնության գաղափար (բայ), չորրորդ խումբը՝ գործողության հատկանիշ (մակբայ):

Կրկնավոր հիմքերով գոյականական, ածականական, բայական և մակբայական բարդությունները հիմնականում կազմված են կախյալ արմատներով. հազվադեպ հանդիպում են անկախ արմատներով կազմություններ:

Այսպես, Աստվածաշնչում գործածված *խորխորատ*, *չարչարանք* (գոյ.), *մեծամեծ*, *չարաչար* (ած.), *կարկապել*, *խողխողել* (բայ), *շեղջաշեղջ*, *վազվազ* (մակբայ) բարդությունների արտահայտության պլանի (ձևության) վերլուծությամբ հնարավոր է պարզել դրանց անկախ արմատական ձևայինները, որոնց կրկնությամբ կազմվել են այդ բարդությունները: Օրինակ՝ խորխորատ (խոր+խոր), մեծամեծ (մեծ+մեծ), կարկատել (կար+կատ (տ<ր) ել), շեղջաշեղջ (շեղջ+շեղջ) և այլն⁸:

Սակայն Աստվածաշնչում հանդիպում են որոշակի բարդություններ, որոնց արտահայտության պլանի վերլուծությամբ հնարավոր չէ պարզել դրանց սերող հիմքերը (արմատական բաղադրիչները): Համեմատեք *կոկորդ* (գոյ.), *շոգմոգ* (ած.), *շաղփաղփել*, *շոշափել* (բայ), *անդադար*, *անդանդաղ* (մակբայ) և այլն:

Այս կարգի բառերի նկատմամբ պետք է կատարել ստուգաբանական քննություն՝ բացահայտելու դրանց հիմնական ձևայինները, ինչպես նաև պարզելու դրանց բնիկ կամ փոխառյալ լինելու հանգամանքը:

Այստեղ մենք կանդրադառնանք միայն *բայական համադրական բարդություններին*, որոնց սերող հիմքերը կազմված են կախյալ արմատների կրկնությամբ, և կփորձենք ցույց տալ դրանց բառակազմական (հիմքակազմական) տիպերը⁹:

Աստվածաշնչում հանդիպում են հետևյալ բայական (համադրական) բարդությունները, որոնց հիմքերը կազմվել են կախյալ արմատների կրկնությամբ.

աղաղակել	դանդաչել	կողկողիլ
արհամարհել	երերիլ	հայհոյել
արծարծել	խարխաբել	մարմաջել
բաբախել	խողխողել	շաղփաղփել

⁸ Բագրատունի 1852, 660:

⁹ Աստվածաշնչում կախյալ արմատների կրկնությամբ կազմված գոյականական, ածականական և մակբայական բարդություններն առանձին ուսումնասիրության նյութ կարող են դառնալ:

Կախյալ արմատների բառակազմական արժեքը...

բարբարել	կականել	շօշափել
գրգռել	կասկածել	փայփայել
դանդաղել	կերկերիլ	փրփրալ

Դիտարկելով այս կարգի բայահիմքերի արտահայտության պլանը՝ կարելի է կատարել որոշակի խմբավորումներ և պարզաբանել դրանց բառակազմական տիպերը¹⁰:

Որոշ բայական բարդությունների արմատական բաղադրիչները բառակազմական քայլերի են մասնակցել *անհնչյունափոխ ձևով*, ինչպես՝ արծարծել (արծ+արծ), երերիլ (եր+եր) խողխողել (խող+խող), կերկերիլ (կեր+կեր), փայփայել (փայ+փայ), կողկողիլ (կող+կող) և այլն:

Յույց տանք այս բառերի կախյալ արմատները, բարդությունների իմաստները՝ հընթացս վկայելով կրկնավոր սերող հիմքով նորակազմություններն Աստվածաշնչում:

Աղաղակել կրկնավոր բարդության բայահիմքը կազմված է *աղաղ* բնածայնական արմատից (առկա է բրբ. *աղաղել* բայի մեջ)՝ *-ակ* վերջածանցով («գոչյուն» իմաստով)¹¹: Հետևաբար՝ *աղաղակել*՝ «գոչել, ծայն տալ» (հմմտ. Եսալ ... *աղաղակեաց* ի ծայն մեծ դառնացեալ յոյժ (Ծնն. ԻԷ. 34)):

Աղաղակ սերող հիմքով Աստվածաշնչում հանդիպում են *աղաղակ առնել* և *աղաղակ բառնալ* բայական հարադրությունները (հմմտ. *Աղաղակ արասցէ* վասն նոցա (Եսայ. Ե. 30)): Քաղաքացիքն ... *զաղաղակ բարձեալ* կարդային առ Շմավոն (Ա.Մակ. ԺԳ. 45):

ՆՀԲ-ն *աղաղակ* սերող հիմքով այլ բարդություն չի վկայում:

Արծարծել բառի *արծ* ձևույթը կապվում է *արծնել* բայի («տաք երկաթով փայտին գծագրել») արմատի հետ և հանգում է բնիկ հնդեվրոպական *arg* արմատին՝ «փայլուն, սպիտակ, լուսավոր» նշանակություններով¹², բարդության իմաստն է «ցույց տալ, ներկայացնել»։ *Արծարծեցաւ* ոգին Յակոբայ հօր նոցա (Ծնն. ԻԵ. 27): Աստվածաշնչում հանդիպում է *-ան-* տևական կերպի ածանցով՝ *արծարծանել*։ Ոչ որպէս դարբին մի որ փրովք կայծակունս *արծարծանէ* (Եսայ. ԾԴ. 16):

¹⁰ Գրաբարի կրկնավոր բարդությունների կառուցվածքին անդրադարձել են՝ **Աճառյան** 1957, 83–93: **Աբրահամյան** 1962, 138–141:

¹¹ Կախյալ ձևույթը հանգում է հնդեվրոպական *ala- բնածայնական արմատին (**Ջահուկյան** 2010, 33):

¹² **Աճառյան** 1971, 318–319:

Խաչատրյան Լ.

ՆՀԲ-ն *արծարծ* սերող հիմքով վկայում է *արծարծիչ* (արծարծող), *արծարծուփին* և *արծարծումն* (ցույց տալը, ներկայացնելը) բառերը:

Երերիլ բարդությունն առաջացել է *երեր* սերող հիմքով. վերջինս ձևավորվել է կախյալ *եր* արմատի կրկնությամբ, որ հանգում է հնխ. *tres*- «վախից դող(ալ)» ձևին¹³: *Երերիլ* կրկնավոր բարդությունը «տատանվել, շարժվել» իմաստով գործածվել է Աստվածաշնչում (հմմտ. *Երերեալ* եւ տատանեալ եղիցես (Ծնն. Դ.12)):

Խողխողել կազմված է պարզական *խող* արմատի կրկնությամբ՝ «սպանել» իմաստով¹⁴. բարդության իմաստն է «սրով՝ զենքով ծակծկել, սպանել» (հմմտ. Եւ անդէն իբրեւ եհան՝ *խողխողեաց* (Բ. Մակ. Դ. 34)):

ՆՀԲ-ն *խողխող* սերող հիմքով վկայում է *խողխողիչ* (սպանող) և *խողխողումն* (սպանություն) բառերը:

Բարբարել բառի արմատի ծագումն անհայտ է¹⁵: Կրկնավոր բարդությունը «ժամանակ չունենալ, չկարողանալ մի բան անել. վարանել, տատանվել» իմաստներով գործածվել է Աստվածաշնչում (հմմտ. Զի եւ դուք զմտաւ ածէք հոգալ ինչ վասն իմ, բայց *բարբարէիք* իմնէ (Փիլի., Դ. 11)):

ՆՀԲ-ն *բարբար* սերող հիմքով վկայում է *բարբարանք* (վարանում, տատանում) բառը:

Փայփայել կրկնավոր բարդության հիմնական ձևությոն հանգում է անձանոթ *փայ* արմատին¹⁶: Բարդության նշանակությունն է «հոգատարությամբ՝ սիրով գուրգուրել, խնամել». *Փայփայեցից* զնոսա, որպէս *փայփայէ* հայր զորդի (Մաղա. Գ. 17):

Փայփայ սերող հիմքով գրաբարում գործածվում է *փայփայանք* բառը՝ «գուրգուրանք, խնամք» նշանակությամբ:

Կողկողիլ¹⁷ «ցավագին աչքերով նայել, լալ, հեծկլտալ» (հմմտ. *Կողկողեսցին* առ դրունս վատթարաց (Առակ. ԺԴ. 19)):

¹³ Զահուկյան 2010, 223:

¹⁴ Աճառյան 1973, 389:

¹⁵ Աճառյան 1971, 420:

¹⁶ Զահուկյան 2010, 758:

¹⁷ Զահուկյան 2010, 416: Հր. Աճառյանը նախաձև է համարում *կող արմատը, որից՝ *կողալ* «վրան լաց լինել, ողբալ» բայը. այն ներկայացնում է *կողկողալ* բայի պարզականը, որ հին գրականության մեջ չի հանդիպում (տե՛ս Աճառյան 1973, 621):

Կախյալ արմատների բառակազմական արժեքը...

Գրաբարում *կողկող* սերող հիմքով կազմվել են՝ *կողկողագին*, *կողկողայի* (ողորմագին, ցավագին), *կողկողաձայն* (որտեղ ցավագին ձայն կա), *կողկողանք*, *կողկողումն* (պաղատանք, կարեկցություն) և այլն:

Կողկողագին կազմությունը հանդիպում է Աստվածաշնչում (հմմտ. Եւ յայեսցիս ստէպ *կողկողագին* յամենայն բարութիւնս զոր յարասցէ Տէր Աստուած, (Ա. Թագ. Բ. 32)):

Բ) Որոշ բայական բարդություններ կազմվել են արմատի ձայնավորի հնչյունափոխությամբ, ձայնդարձի կամ հերթագայության, ինչպես նաև հնչյունի անկման միջոցով, ինչպես՝ *գրգռել*, *դանդաղիլ*, *դանդաչել*, *կասկածել*, *հայհոյել*, *փրփրալ*, *շօշափել* և այլն:

Արմատի հնչյունափոխությամբ է ձևավորվել **փրփրել** բնիկ հայերեն բառը. ծագում է հնիւ. *pher- (ցանել, սփռել) արմատի կրկնությամբ¹⁸, բարդության իմաստն է «զարմանալ» (հմմտ. Եւ *փրփրէ* եւ կրճտէ զատամունս իւր եւ ցամաքի (Մար. Թ. 17)):

Փրփ(ու)ր սերող հիմքով գրաբարում հանդիպում են որոշակի կազմություններ. *փրփրադեզ* (դեզի նման բարձր փրփուրներ), *փրփրերախ* (բերանը փրփրակալած), *փրփրական* (փրփուր կապած), *փրփրապեսակ* (փրփուր կապած), *փրփրեղջիւր* (փրփուրի տեսքով եղջուրներ) և այլն:

Ձայնդարձով է ձևավորվել **հայհոյել** բառը. կազմված է բնաձայնական *հայ* արմատից՝ որպես ծաղրական բացականչություն, այն անգործաձական բառ է¹⁹, բարդության իմաստն է «լուտանքներ թափել, վիրավորել» (հմմտ. *Ջի հայհոյէին* զԱստուած որդիք նորա (Ա.Թագ. Գ.13)):

Գրաբարում *հայհոյ* սերող հիմքով հանդիպում են. *հայհոյանք*, *հայհոյութիւն* (վիրավորանք՝ անարգանք հասցնելը), *հայհոյական* (վիրավորանք պարունակող), *հայհոյիչ* (վիրավորանք հասցնող) բառերը և այլն:

Աստվածաշնչում **գործածվել** են *հայհոյիչ* և *հայհոյութիւն* բառերը «Եցոյց նոցա զանօրէն *զհայհոյիչն* (Բ. Մակ. ԺԵ. 32): Լուայք *զհայհոյութիւն* դորա (Մատ. ԻԶ. 65)»:

Արմատի բաղաձայնի հերթագայությամբ են ձևավորվել հետևյալ բառերը:

Մարմաջել կրկնավոր բարդության սերող հիմքն է *մարմաջ*, որի հիմնական ձևույթը հանգում է հնդեվրոպական *mer- «շփել, տրորել»²⁰ արմատին՝ e>a ձայնդարձով: *Մարմաջ* կրկնավորն ունի «քոր, մորթի գրգիռ» նշանա-

¹⁸ Աճառյան 1979, 535:

¹⁹ Աճառյան 1977, 29:

²⁰ Զահուկյան 2010, 517:

կություն. բայական միավորը «եռք ունենալ, քոր գալ, մորմոքվել, մրմռալ» իմաստներով գործածվել է Աստվածաշնչում. «Ըստ իւրաքանչիւր ցանկութեանց կուտեսցեն իւրեանց վարդապետս, ըստ *մարմաջելոյ* լսելեաց իւրեանց (Բ. Տիմո., Դ. 3)»:

Մարմաջ սերող հիմքով գրաբարում հանդիպում են *մարմաջողական* (մորմոքեցնող, տանջանք պատճառող), *մարմաջին*, *մարմաջումն* (մորմոք, կսկիիծ, հոգեկան ցավ) բառերը և այլն:

Գրգռել. *գրգռ* հիմնային բաղադրիչը հանգում է հնդեվրոպական *ghers – «զգվանք» արմատին (*ghēr-ghērs>գրգիռ)²¹: Կրկնավոր բարդությունն ունի «հակառակվել, դրդել» իմաստներ (հմմտ. Եւ զերկիր նորն սկսիր ժառանգել, եւ *գրգռել* ընդ նմա պատերազմ (Բ. Օրենք. Բ. 24)):

Գրգ(հ)ռ սերող հիմքով են կազմվել *գրգռիչ* (հակառակություն պարունակող), *գրգռութիւն* (հակառակություն, վեճ) և այլ բառեր:

Դանդաղիլ կազմված է *դաղ* պարզ արմատի կրկնությամբ, որի տարբերակներն են *դիլ*, *դուլ* (հմմտ. *անդուլ*), *դլալ*. ծագում է հնիւ. dhar «կացուցանել, կալ, ունել տանել, կրել» արմատից²²: Աստվածաշնչում *դանդաղիլ* բառը գործածված է «ոչ արագ շարժվել, հապաղել, չշտապել, ծովանալ» իմաստով (հմմտ. Եւ ի գբերան իւր *դանդաղի* տանել (Առակ. ԻՁ.15)):

Դանդաղ սերող հիմքով ՆՀԲ-ն վկայում է հետևյալ կազմությունները՝ *դանդաղաբար* (տարտամորեն, առանց շտապելու), *դանդաղագին* (շատ դանդաղ), *դանդաղական* (որտեղ դանդաղություն կա), *դանդաղամած* (թանձրությամբ անշարժ մնացած), *դանդաղանք*, *դանդաղութիւն*, *դանդաղումն* (տարտամություն), *դանդաղկոյր* (ծանրաշարժ) և այլն:

Դանդաջել²³ «հարբածի պես այս ու այն կողմ երերալ» (հմմտ. Մեծ և փոքր առ հասարակ մոլորեալք *դանդաջեն* ի վերայ լերանց (Եսայ. ԻԲ. 5)):

Դանդաջ սերող հիմքով են կազմվել հետևյալ բառերը՝ *դանդաջկոյր*, *դանդաջուն* (երերուն, տատանվող, ցնորված), *դանդաջութիւն*, *դանդաջումն* (զանազանք, ցնորք, կասկածամտություն) և այլ բառեր:

Խարխաբել բառի արմատական ձևությոն (խաբ/խափ) վերջնական ստուգաբանություն չի ստացել. այն կապում են կա՛մ *խարխ* արմատի (հմմտ.

²¹ Զահուկյան 2010, 176:

²² Աճառյան 1971, 620:

²³ Հր. Աճառյանը համարում է կրկնավոր բարդություն. արմատը չի նշում (1971, 621): Ըստ Գ. Զահուկյանի՝ ծագումն անհայտ է (Զահուկյան 2010, 183):

խարխ+ափ), կա՛մ *խափ* արմատի հետ²⁴, որի կրկնությամբ՝ *խարխաբ(ել)*՝ «մթնում կույրի պես շոշափելով՝ առաջ գնալ» իմաստով (հմմտ. Որպէս *խարխաբիցէ* կոյր ի խաւարի (Բ. Օրէնք. ԲԸ. 29)):

խարխաբ սերող հիմքով գրաբարում հանդիպում են՝ *խարխաբանք*, *խարխաբումն* (խավարում կուրորեն շոշափելը՝ խարխափելը) և այլն:

Կասկածել²⁵ կրկնավորի արմատական ձևությամբ՝ *կած*, առաջացել է *կարծ* արմատից հնչյունի անկումով (հմմտ. *կարծ-իք*): Կրկնավոր (բայական) բարդությունը նշանակում է «տարակույս՝ վտանգ՝ երկյուղ ապրել», «երկմտել, տատանվել» (հմմտ. - Ոչ ոք տեսանէ զիս. զի՞ *կասկածեմ* (Սիրաք. ԻԳ. 26)):

Գրաբարում *կասկած* սերող հիմքով հանդիպում են հետևյալ բառերը՝ *կասկածանք* (չարության ակնկալություն, վարանում, վախ, տարակույս), *կասկածագին* (երկյուղագին, կասկածանքով լի), *կասկածաւոր*, *կասկածելի* (երկյուղալի, զգուշավոր) և այլն:

Որոշ բայական կրկնավորներ էլ ձևավորվել են *արմատի հնչյունի անկումով*, ինչպես՝ *բաբախել*, *կականել*, *հեծեծել*, *շոշափել* և այլն: Վկայենք բնագրային օրինակներ:

Բաբախել կրկնավորի արմատական բաղադրիչն է *բախ*՝ «հարված, զարկ» իմաստով. հմմտ. բախ-ել «զարկել, ծեծել (դռան՝ ջրի ալիքի՝ կրծքի առումով)»²⁶): Բարդության իմաստն է՝ «իրար զարնվել» (հմմտ. Ծունկը նորա զմիմեանս *բաբախէին* (Դանի. Ե. 6)):

ՆՀԲ-ն *բաբախ* սերող հիմքով վկայում է *բաբախիւն* և *բաբախումն* բառերը՝ «դղրդյուն, որոտ» նշանակություններով:

Կականել բարդության սերող հիմքը՝ *կական*, բնածայնական բառ է՝ կազմված *կան* կախյալ արմատի կրկնությամբ, որ նշանակում է «ծիչ, լացի ձայն, ողբ»²⁷: Ցեղակից լեզուներում արմատի տարբերակն ունի «սագի նման ձայներ հանել» նշանակություն: *Կականել* բայական կրկնավորը նշանակում է «դառնապես ողբալ»: Այդ իմաստով այն գործածվել է Աստվածաշնչում (հմմտ. Ընտիրքն զձայն բարձեալ *կականէին* (Ողբ.Ե.13)):

Կական սերող հիմքով է կազմվել *կական բառնալ* բայական հարադրությունը՝ «բարձրաձայն ողբալ» իմաստով (հմմտ. *Կական բարձ* ի ձայն մեծ (ԲԹագ. ԺԹ. 4)):

²⁴ Ջահուկյան 2010, 321: Աճառյան 1973, 346:

²⁵ Աճառյան 1973, 533–534:

²⁶ Աճառյան 1977, 389:

²⁷ Աճառյան 1973, 488:

Շօշափել բարդության հիմնային բաղադրիչը՝ շօշափ («ձեռքերը քսելով զննել») անգործաձական միավորն է. այն կազմված է *շափ* արմատի կրկնությամբ, որ դարձյալ առանձին անգործաձական է. *շափշափել* > *շաւշափել* > *շօշափել*²⁸ (հմմտ. Գուգէ *շօշափիցէ* զիս հայր իմ (Ծնն. Իէ. 12)):

Շօշափ սերող հիմքով գրաբարում հանդիպում են՝ *շօշափական* (շոշափել կարողացող), *շօշափելի* (ինչ որ հնարավոր է շոշափել), *շօշափելիք* (շոշափելու գործիք), *շօշափութիւն*, *շօշափումն* (շոշափելը, շոշափելիք) և այլն:

Աստվածաշնչում գործածվել է *շօշափելի* կազմությունը. Ջի ոչ էի մատուցեալ առ լեառն *շօշափելի* (Եբրա. ԺԲ. 18):

Գ) Որոշ կրկնավոր բարդություններ ձևավորվել են աճականի (հավելատարրային մասնիկների) միջոցով: Աճականները, ի տարբերություն ածանցների, կախյալ արմատներին գործառական կամ իմաստային նոր արժեք չեն հաղորդում, աճականների առկայության դեպքում էլ արմատը շարունակում է մնալ արմատի սահմաններում²⁹:

Աստվածաշնչում հանդիպում են արմատակրկնությամբ և աճականով ձևավորված հետևյալ բայական բարդությունները՝ *արհամարհել*, *շաղփաղփել* և այլն:

Արհամարհել կրկնավորի հիմնական բաղադրիչն է *արհ* ձևությամբ (<իրանյան *ahr*)³⁰: Բարդության արտահայտության պլանում *արհ* արմատն ստացել է մ հավելվածային տարրը (մարհ)՝ պահպանելով բառապատկերի ամբողջականությունը:

Բայական բարդությունը՝ *արհամարհել*, ունի «խոտելի՝ անարգ համարել, բանի տեղ չդնել» իմաստներ և այդ նշանակություններով հանդիպում է Աստվածաշնչում (հմմտ. Արդ իբրեւ ետես թէ յղացաւ, *արհամարհեցայ* ես յաչս նորա (Ծնն. ԺԶ. 5)):

ՆՀԲ-ն *արհամարհ* սերող հիմքով վկայում է հետևյալ բառերը՝ *արհամարհաբար* (անարգաբար), *արհամարհանք* (անարգանք), *արհամարհիչ* (անար-

²⁸ **Ջահուկյան** 2010, 584: Աճառյանը *շափ* արմատը միացնում է *շուփ* (շփել) արմատի հետ՝ մակաբերելով *շօշափել* ձևը (1977, 547):

²⁹ **Ջահուկյան** 1989, 34:

³⁰ **Աճառյան** 1971, 323: Գ.Ջահուկյանը, հնարավոր համարելով բառի կրկնավոր կազմությունը, միաժամանակ հավանական է համարում, որ այն փոխառություն է իրանական աղբյուրից՝ *ahramarhi* < **adra* (h)*mr*vyā «աննշան համարված, ստոր համարված, արհամարհելի» իմաստով: (**Ջահուկյան** 2010, 92):

Կախյալ արմատների բառակազմական արժեքը...

գող), *արհամարհող* (արհամարող), *արհամարհողի* (արհամահանք, անարգանք) և այլն:

Աստվածաշնչում գործածվել են *արհամարհանք* (Եսթեր, Ա. 18), *արհամարհող* (Առակ., ԺԱ. 3), *արհամարհող* (Ծնն., ԻԷ. 12) և *արհամարհողի* բառերը (Ա.Թագ., ԻԴ. 12):

Շաղփաղփել կրկնավորի արմատական բաղադրիչն է *շաղփ* առանձին անգործածական արմատը³¹, «անհեթեթ՝ անմիտ՝ ցնորամիտ խոսքեր՝ դատողություն» նշանակությամբ: *Շաղփաղփել* բայական միավորը «հիմար-հիմար խոսել, ցնդաբանել, դատարկաբանել» իմաստներով գործածվում է գրաբարում (հմմտ. Ուր ասողք իցեն *մի՛ շաղփաղփեր* (Սիրաք. ԼԵ. 13)):

Շաղփաղփ սերող հիմքով գրաբարում հանդիպում են հետևյալ կազմությունները՝ *շաղփաղփաբան* (շաղակրատող), *շաղփաղփական* (շաղակրատ, դատարկախոս, ցնորամիտ, անհեթեթ), *շաղփաղփանք*, *շաղփաղփություն* (շաղակրատանք, դատարկախոսություն, զառանցանք), *շաղփաղփում* (դատարկախոսելը, զառանցելը), *շաղփաղփուր* (դատարկաբան) և այլն:

Աստվածաշնչում գործածվել է *շաղփաղփություն* կազմությունը (հմմտ. Երեմեան առաջի նոցա *շաղփաղփություն* բանքն նոցա (Ղու. ԻԴ. 11)):

Եզրակացություն

Աստվածաշնչում գործածվող բարդությունների մեջ զգալի կշիռ ունեն կախյալ արմատներով կազմությունները, որոնցով կազմվել են մի շարք բայական (համադրական) բարդություններ: Այդ կարգի բարդությունների կազմավորման գործում կարևոր դեր ունեն արմատակրկնությունը և որոշակի գործոններ, որոնց հիման վրա էլ առանձնացվում են դրանց բառակազմական տիպերը՝ արմատակրկնության տիպ, ինչյունափոխությամբ տիպ (ինչյունափոխություն, ձայնդարձ, հերթագայություն, ինչյունաանկում), աճականով տիպ և այլն:

Կախյալ արմատներով բայական (համադրական) բարդությունների ուսումնասիրությունը վկայում է հայերենի բառակազմական եղանակների ճկունության մասին, որի միջոցով նախագրային հայերենում կազմվել են զգալի թվով բարդություններ և նախագրային հայերենի բառային կազմի հետ փոխանցվել հին հայերենին: Ինչպես ցույց է տալիս հին հայերենի բառային կազմի համաժամանակյա ուսումնասիրությունը, կախյալ արմատները բառակազմական այլ քայլերի չեն մասնակցել՝ քննարկված բառային միավորներից

³¹ Աճառյան 1977, 490:

Խաչատրյան Լ.

դուրս: Մյուս կողմից՝ այդ արմատների կրկնությամբ կազմված անվանական հատվածները, իբրև սերող հիմքեր, կենսունակ մասնակցություն են ունեցել բառակազմության գործընթացում՝ ստեղծելով նորանոր բարդություններ, որոնք կայունացել են հին հայերենի բառային կազմում:

Քննության ընթացքում բերված ստուգաբանական վկայությունները ցույց են տալիս, որ կախյալ արմատների նախնական ձևերը կա՛մ բնիկ հայերեն արմատներ են, կա՛մ փոխառություններ են ցեղակից լեզուներից:

Կախյալ արմատներով բայական բարդությունների ուսումնասիրությունը կարևորվում է պատմական բառագիտության առումով. քննության առարկան բնութագրում է լեզվական տվյալ իրողությունը համաժամանակյա կտրվածքով, այն կարող է նաև համեմատության եզր (եզրեր) դառնալ կախյալ արմատներով բայական բարդությունների տարժամանակյա ուսումնասիրության համար՝ լեզվի զարգացման տարբեր գոյավիճակների միջև:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Աբրահամյան Ա. 1962, Բայը ժամանակակից հայերենում, գ. 1, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., Երևան, 729 էջ:

Աճառյան Հ. 1957, Լիակատար քերականություն հայոց լեզվի՝ համեմատությամբ 562 լեզուների, հ. 3, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., Երևան, 1011 էջ:

Աճառյան Հ. 1971, Հայերեն արմատական բառարան, հ. 1, Երևանի համալսարանի հրատ., Երևան, 698 էջ:

Աճառյան Հ. 1973, Հայերեն արմատական բառարան, հ. 2, Երևանի համալսարանի հրատ., Երևան, 687 էջ:

Աճառյան Հ. 1977, Հայերեն արմատական բառարան, հ. 3, Երևանի համալսարանի հրատ., Երևան, 635 էջ:

Աճառյան Հ. 1979, Հայերեն արմատական բառարան, հ. 4, Երևանի համալսարանի հրատ., Երևան, 674 էջ:

Առաքելյան Վ. 1984, Հինգերորդ դարի հայ թարգմանական գրականության լեզուն և ոճը, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 230 էջ:

Առձեռն բառարան հայկազնեան լեզուի 1865, Երկրորդ տպագրություն, Վենետիկ, Սուրբ Ղազար:

Աստվածաշունչ մատենան Հին և Նոր կտակարանաց, Հայաստանի Աստուածաշնչային ընկերություն, UBS-EPF 1997 – 1.5M, Printed in Great Britain.

Բագրատունի Ա. 1852, Հայերեն քերականություն ի պէտս զարգացելոց, Վենետիկ, տպ. Սրբոյն Ղազարու, 743 էջ:

Խաչատրյան Լ. 2018, Կրկնավոր բարդությունների աճականով և նախդրավոր տիպերն Աստվածաշունչ մատյանում, ՀՀ ԳԱԱ, Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ» Գյումրի, N 21, էջ 64–75:

Կախյալ արմատների բառակազմական արժեքը...

Խաչատրյան Լ. 2018, Կրկնավոր բարդությունների ծայնդարձով և հերթագայությամբ տիպերն Աստվածաշունչ մատյանում, ՀՀ ԳԱԱ Բանբեր, ՀՀ ԳԱԱ «Գիտություն հրատ.», Երևան, N 4, էջ 194-205:

Խաչատրյան Լ. 2019, Կրկնավոր բարդությունների արմատական տիպն հայերեն Աստվածաշունչ մատյանում, Բանբեր ԵՊՀ, Հայագիտություն, Երևանի համալսարանի հրատ., Երևան, N 1, էջ 52-62:

Համաբարբառ հին և նոր կտակարանաց, աշխատասիրութիւն Թադէոս վարդապետի Աստուածատուրեան Արապկերցոյ 1895, տպ. Յերուսաղէմ, Առաքելական աթոռոյ Սրբոց Յակովբեանց, Երուսաղէմ, 1578 էջ:

Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Երկասիրութիւն երից վարդապետաց 1836, Գ. Աւետիքեան, Խ. Սիրմէլեան, Մ. Ազերեան, Խ. Ա. Վենետիկ, տպ. Սր. Ղազար, 1140 էջ:

Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Երկասիրութիւն երից վարդապետաց 1837, Գ. Աւետիքեան, Խ. Սիրմէլեան, Մ. Ազերեան, Խ. Բ. Վենետիկ, տպ. Սր. Ղազար, 1170 էջ:

Ջահուկյան Գ. 1989, Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 319 էջ:

Ջահուկյան Գ. 2010, Ստուգաբանական բառարան, «Ասողիկ» հրատ., Երևան, 819 էջ:

Туманян Э. 1971, Древнеармянский язык, Москва, изд.-во «Наука», 448 с.

Համառոտագրություններ

Անգէ- Անգէոս

Առակ- Առակք Սողոմոնի

Բ. Տիմո.- Թուղթք Պաւղոսի Առաքելոյ, Առ Տիմոթէոս Բ.

Դանի.-Դանիէլ

Եսայ.- Եսայի

Ելք- Ելք

Եզե.- Եզեկիէլ

Եսթեր- Եսթեր

Եզր- Եզր

Զաքա.- Զաքարիայ

Թագ.Ա. – Թագաւորութեանց Ա

Իմաս.- Իմաստութիւն Սողոմոնի

Մակ. Ա. Բ. Գ.- Գիրք Մակաբայեցոց Ա. Բ. Գ.

Մատ.- Աւետարան ըստ Մատթէոսի

Մար.- Աւետարան ըստ Մարկոսի

Յակո.- Թուղթք Յակոբայ Առաքելոյ

Նաւում- Նաւում

Ողբ. – Ողբք Երեմեայ մարգարէի

Ովսէ- Ովսէէ

Սաղ.- Գիրք Սաղմոսաց

Սիրաք- Սիրաք

Օրենք-Բ.- Երկրորդումն Օրինաց

**СЛОВООБРАЗОВАТЕЛЬНОЕ ЗНАЧЕНИЕ СВЯЗАННЫХ
КОРНЕЙ В СЛОЖНЫХ ГЛАГОЛЬНЫХ КОМПОЗИТАХ
ДРЕВНЕАРМЯНСКОГО ЯЗЫКА
(ПО ДАННЫМ БИБЛИИ)**

ХАЧАТРЯН Л.

Резюме

Ключевые слова: связанные корни, редупликативные сложные слова, порождающая основа, синтетические сложные слова, структурный тип, корневой тип, тип звуковых изменений.

Предметом исследования являются глагольные (синтетические) композиты, использованные в первом варианте армянского перевода Библии, в частности, типы глагольных (синтетических) композитов, редупликативные типы (աբաբաբաբա), тип звуковых изменений (աբաբաբա), тип приращения (աբաբաբաբա) и т.д. В типах звуковых изменений редупликатов определенную роль играют и другие факторы, такие как чередование гласных (աբաբաբա), чередование согласных (աբաբաբа), падение звука (աբաբաբա) и т.д.

Наличие глагольных композитов в тексте Библии показывает, что использование композитов восходит еще к дописьменному периоду. В дальнейшем они вошли в обиход армянского языка. Этимологические данные явствуют, что первичные формы связанных корней являются либо армянскими корнями, либо заимствованиями из родственных языков.

Исследование глагольных (синтетических) композитов, составленных из связанных корней, весьма важно с точки зрения синхронии. Оно может быть использовано при диахронических исследованиях данной языковой реалии.

THE WORD-FORMING VALUE OF DEPENDENT ROOTS IN
THE VERBAL COMPOUNDS OF GRABAR
(WITH REFERENCE TO BIBLICAL DATA)

KHACHATRYAN L.

Summary

Key words: dependent root, reduplicative compound, derivative stem, closed compound, structural type, root type, sound interchange type.

The article discusses the verbal (closed) compounds formed with the reduplication of dependent stems which were used in the first Armenian translation of the Bible. Moreover, within the frames of our study, different types of verbal (closed) compounds of dependent roots are revealed: root reduplication type (արծարծել), sound interchange type (փրփրալ), determinative type (շաղփաղփել), etc. It is established that in the sound interchange type of reduplications other factors, such as vowel alternation (հայհոյել), consonant alternation (գրգռել), sound-dropping (բաբախել), etc., play a certain role.

The study of verb-compounds used in the Bible shows that they were formed in the prewritten period of Armenian and transferred to Old Armenian as heritage. The etymological data show that the first forms of dependent roots are either original Armenian roots or borrowings from related languages.

The analysis of verb (closed) compounds formed by dependent roots are significant in terms of synchrony. It can also be used within the scope of the diachronic research of the given linguistic realia.